

**ՆԻԿՈՒ ԿԱՐԱԴԵՏՅԱՆ.
ՆԱՅԿԱԿԱՆ ՆԱՐՅԻ ՔԱՌՈՒԴԻՆԵՐՈՒՄ**

Մտորելու ներկայացնում ենք Նիկոլ Վարդանի Կարապետյանի պահոցի հիշարժան փաստաթղթերից: Տարիներ խնամքով պահպանված նյութերն այսօր հրապարակելով՝ միտում ունենք լուսաբանելու ոչ հեռու անցյալի որոշ սրվերոտ հարցեր, ներկայացնելու հանրությանն առ այսօր անձանոթ որոշ եզրեր:

Նիկոլ Կարապետյանը (կենսագրական տվյալները տե՛ս «Էջմիածին» 2011 թ. «Թ», էջ 63-64) 1960-ական թվականներին նամակագրական կապեր է ունեցել լեհ արևելագետ, իրավագետ, հասարակական գործիչ, հրապարակախոս Բոգդան Գեմբարսկու հետ, բազմիցս իր խոհակցությունն արտահայտել նրա՝ Նայկական հարցին առնչվող հոդվածներին: Գեմբարսկու շնորհիվ լեհական մամուլում Նիկոլ Կարապետյանը տպագրել է բազմաթիվ հոդվածներ:

1960-ականներին լեհական մամուլում տպագրված լեհ պատմաբան, սլավոնագետ Բարովսկու մի հոդվածի առիթով Նիկոլ Կարապետյանը պատրաստան հոդված է տպագրում, առճակարում Բարովսկու թուրքամետ վերլուծությունների դեմ: Նման համարձակության արդյունքում պատմաբանը հեռացվում է աշխատանքից, գրկվում կուսակցական տրամսից:

Նկնց այս ժամանակաշրջանում էլ Նայաստանում ձեռագիր տարբերակով շրջանառվում է Նենրիկ Բարովսկու հոդվածը, որ լեհերենից թարգմանել է Գեորգյան Նոգետոր ճեմարանի ժուսերենի դասախոս Մարիա Գրոխովսկան: Պատմաբանների, քաղաքագետների, մտավորականների մի սրվար շրջանակ Երևանում տեղեկանում, ձեռքից ձեռք է փոխանցում հոդվածը, հոդված, որ ակամա ճակատագրական դեր է խաղում մի պատմաբանի կյանքում, որը եզակիներից էր, եթե ոչ միակը իբրեւ Նայկական հարցի, Նայ դարի անաչառ հերագուրող:

Նիկոլ Կարապետյանի ընտանեկան արխիվում առ այսօր ծվարած պատմական փաստաթղթերի այս տրցակը, թերեւս ուշացումով, լույս սփռի արժարծվող խնդիրների վրա:

1.

ՍԻՐԵԼԻ ԲԱՐԵԿԱՄ Բ. ԳԵՄԲԱՐՍԿԻ

Հենց նոր ստացա Ձեր 15.03.62 թ. նամակը, որով տեղեկացնում եք իմ՝ «Բատովսկին ճիշտ չէ» հոդվածի ստացումը Ձեր կողմից: Շատ ուրախ եմ, որ պատասխան հոդվածը Ձեզ դուր է եկել: Որպեսզի հնարավոր ասեկոսենք եւ հանելուկների առիթ չտանք մեր ընդդիմախոսներին, նպատակահարմար եմ գտնում հրապարակել հոդվածը՝ ամբողջապես նշելով հեղինակի անունը, ազգանունը, եթե ցանկանում եք, նույնիսկ հասցեները եւ կոչումները (պատմական գիտությունների թեկնածու, Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, դոցենտ):

Լիովին համամիտ եմ Ձեր առաջարկությանը՝ հոդվածը հրապարակել «Նամակ Սովետական Հայաստանից. Բատովսկին իրավացի չէ» վերնագրով:

Եթե այնուամենայնիվ պարտադրեն համառոտել հոդվածը, ապա խնդրում եմ դա այնպես անել, որ ընթերցողին տրվի հնարավորությունը՝ ըմբռնելու Բատովսկու անհիմն եւ անհեթեթ այն տեսակետը, ըստ որի՝ Թուրքիայի եւ ԽՍՀՄ-ի միջեւ սահմանը, որ հաստատվել է 1921 թ. պայմանագրով՝ իբրեւ «արդյունք են ... պատմական անհրաժեշտության եւ ենթակա չէ փոփոխման» եւ այլն:

Ինձ ծանոթ է Խորհրդային մեծ հանրագիտարանում առկա հոդվածը, այդ եւ նմանատիպ այլ աշխատանքների վերաբերյալ ես իմ կարծիքը մանրամասնորեն կգրեմ հետո: Առայժմ միայն կասեմ, որ այդ հայեցակարգերի դեմ ժամանակին տպագրվել են քննադատական գրախոսություններ ոչ միայն մեր հանրապետությունում, այլեւ Մոսկվայում: Եւ հիմա էլ մեր պատմաբանների կողմից պատրաստվում է հոդված նմանատիպ հայեցակարգի դեմ՝ մասամբ անդրադարձված «Համաշխարհային պատմության» VIII հատորում:

Շնորհակալ եմ պատասխանի համար: Ընդմիջտ մնում եմ պարտական իմ ազգի անկեղծ բարեկամին:

26. 04.1962 թ. ստորագրություն
ք. Երեւան, Պոռչյան 1, 2-րդ մուտք, բն. 12
(թարգմանությունը ռուսերենից՝ Ա. Ա.)

Ն.Վ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Հ. ԲԱՏՈՎՍԿԻՆ ԻՐԱՎԱՑԻ ՁԷ

Ականավոր լեհ հրապարակախոս Բոգդան Գեմբարսկու «Նամակ իմ հին թուրք բարկամին» հոդվածի (տե՛ս Վարչավայում հրատարակվող «Kierunki» շաբաթաթերթի 1961թ. № 47) եւ Հենրիկ Բատովսկու «Նամակ խմբագրությունը. Հայկական հարցի եւ Թուրքիա - ՍՍՌՄ սահմանի մասին» պատասխան հոդվածի երեւան գալն, անպայման, հանդիսանում է ժամանակակից միջազգային զարգացման եւ պատմական անհրաժեշտություն բնական հետեւանք:

Ամեն մի ժողովրդի ազգային-պետական ինքնավարություն, իրավահավասարություն, ազատություն եւ անկախություն իրավունքի ճանաչումը ներկայումս դարձել է աշխարհի պետությունների եւ ժողովուրդների փոխհարաբերությունների պրոբլեմների լուծման հիմնական օրենք:

Գաղութատիրության սիստեմի փլուզումը, նոր պետությունների առաջացումն Ասիայում եւ Աֆրիկայում, 2000-ամյա «ընդմիջումից» հետո Իսրայելի պետության երեւալը, սահմանասյուների տեղաշարժը Եւրոպայում. այս բոլորը տեղի է ունենում մեր աչքերի առջեւ պատմական անհրաժեշտություն այդ օրենքի դործողության ուժով:

Բոգդան Գեմբարսկին այդ հայեցակետով է դիտում հայ-թուրքական հարաբերությունները՝ ժխտելով պատմական Հայաստանի տերիտորիայի 90 տոկոսի վրա թուրքական տիրապետության օրինականությունը, որ թուրքական տիրապետությունը հայկական մարզերում շարունակվում է ազգերի բնաջնջման «իրավունքով»¹:

Դրա համար էլ Գեմբարսկին հարց է բարձրացնում, որպեսզի թուրքերն իրենք, առաջին հերթին թուրքական մտավորականությունը, նախաձեռնություն հանդես բերեն դատապարտելու այն արյունոտ ոճրագործությունները², որ կատարել է թուրքական կառավարությունը 1915 թվական-

1 Նարցի պատմությունը, Կրն Բոգդան Գեմբարսկի, Նամակներ աշխարհին: Կազմեց, խմբագրեց, ծանոթագրեց, վերջաբանը գրեց Ն. Կարճիկյանը, Երևան, 1990: - Ա. Ա.

2 Այսօր, ավելի քան կես դար անց, Բ. Գեմբարսկու այս գաղափարը կարծես ասփճանաբար իրականանում է: - Ա. Ա.

նին, 1918-1920 թվականներին հայ ժողովրդի նկատմամբ եւ, դրանով իսկ, մարդկության հանդեպ, երբ միլիոնից ավելի հայեր բնաջնջվեցին, մեկ եւ կես միլիոնից ավելի հայեր տեղահանվեցին իրենց հնադարյան Հայրենիքից, որոնք տակավին չարունակում են թափառել աշխարհով մեկ եւ ձգտում են վերադառնալ թուրքերի ձեռքով ավերված ու հրդեհված իրենց հարազատ օջախները, որպեսզի մոխիրներից վերածնեն Հայաստանը՝ համաշխարհային քաղաքակրթության հնազույն օրրաններից մեկը: Թուրքիան պետք է հայերին վերադարձնի նրանց հողերը՝ հետեւելով ՄԱԿ-ի եւ ՆԱՏՕ-ի իր դաշնակիցների օրինակին: Ահա, ըստ էության, Գեմբարսկու հոգվածի հիմնական գաղափարը:

Ամբողջությամբ վերցրած՝ չժխտելով Գեմբարսկու հոգվածի նշանակությունն ու կարեւորությունը, Հենրիկ Բատովսկին անհրաժեշտ է համարում տալ մի քանի «բացատրություններ» եւ «ճշտումներ» Գեմբարսկու հոգվածի մի արտահայտություն վերաբերյալ, որը, ինչպես գրում է Բատովսկին, կարող է «մոլթ թվալ» կամ «սխալ հասկացվել»: Ահա Գեմբարսկու այդ արտահայտությունը. «...Ձեզ է տրվել (այսինքն՝ թուրքերին) առանց մի կրակոցի Ռուսական Հայաստանի կեսը (Կարսի մարզը) Արարատի նախալեռնաստանի հետ միասին, որը պատմականորեն երբեք ձեզ չի պատկանել»³:

Բատովսկու պարզաբանումները եւ ճշտումները վերաբերում են մեր կողմից ընդգծված արտահայտություններին եւ հանգում են հետեւյալին: Առաջին՝ Կարսի մարզը Սովետական Ռուսաստանի կողմից թուրքիային է վերադարձվել այն պատճառով, որ այդ մարզը մինչեւ 1878 թվականը «թուրքիային է պատկանելիս եղել», երբ ցարական Ռուսաստանը խլել էր այն թուրքիայից: Երկրորդ՝ թուրքիան Սովետական Ռուսաստանից պահանջեց Արարատի նախալեռնաստանը՝ ստրատեգիական նկատառումներով: Երրորդ՝ Արդահանի մարզը թուրքիային է տրվել Բաթումը Վրաստանին վերադարձնելու փոխարեն: Չորրորդ՝ Նախիջևանի եւ Ղարաբաղի մարզերը տրվել են Ադրբեջանին, որովհետեւ թուրքերը ոչ մի կերպ չէին ուզում Հայաստանին թողնել այդ մարզերը: Հինգերորդ՝ Սովետական Ռուսաստանը ոչ մի կերպ չէր կարող չհամաձայնվել թուրքիայի այդ պահանջներին, որովհետեւ թուրքիան սպառնում էր զավթել նաեւ Երեւանից հարավ ընկած շրջանները եւ նույնիսկ Երեւանը, որպեսզի անմիջական հաղորդակցութ-

3 Նմուր, Բոգդան Գեմբարսկի, անդ, էջ 12:

յուն ունենա Ադրբեջանի հետ: Վեցերորդ՝ հիշյալ բոլոր տերիտորիաները եւ նրանց գումարած անկախ Հայաստանի մի քանի այլ շրջանները փաստորեն պատկանում էին Թուրքիային, քանի որ այդ տերիտորիաների հայ ազգաբնակչութիւնն արդեն կոտորված էր, եւ Բրեստի, Բաթումի ու Ալեքսանդրապոլի «հաշտութեան պայմանագրերի» ուժով հանձնվել էին Թուրքիային:

Այդ պատճառով, եզրակացնում է Հ. Բատովսկին, որքան էլ Թուրքիայի եւ ՍՍՌՄ-ի սահմանը՝ հաստատված 1921 թվականի պայմանագրով «Էմոցիոնալ տհաճութիւն լինի հայերի համար՝ Կարսը եւ Արարատի մարզը կորցնելու տեսակետից», եւ ուշադրութեան առնելով «1918-1920 թվականների բոլոր պարագաները, այդ սահմանը պետք է համարել վերացման ոչ ենթակա պատմական անհրաժեշտութեան արդյունք» (ընդգծ. մերն է՝ Ն. Կ.):

Դժվար չէ նկատել, որ Բատովսկու «պարզաբանումների» եւ «ճշտումների» ողջ էութիւնը հանգում է հետեւյալին. այն ամենը, ինչ որ տեղի է ունեցել անցյալում, իրենց հետեւանքներով հանդերձ՝ պետք է ընդունել որպէս «պատմական անհրաժեշտութիւն», որի պատճառով էլ վերանայման ենթակա չէ:

Տարօրինակ հայացք պատմութեան եւ մարդկային հասարակութեան զարգացման օրինաչափութիւնների նկատմամբ: Հավանաբար Բատովսկին ինքը չի նկատում, թե իր այդ պնդումով ինչպիսի ծառայութիւն է մատուցում մարդկերեններին: Դուրս է գալիս, որ զավթելու եւ կողոպտելու նպատակով ժողովուրդներ բնաջնջելու քաղաքականութիւնը «պատմական անհրաժեշտութիւն է», Բրեստի, Բաթումի (1918 թ.) եւ Ալեքսանդրապոլի (1920 թ.) «հաշտութեան պայմանագրերի» նման ակտերը «պատմական անհրաժեշտութիւն են» եւ իբր «ենթակա չեն վերանայման կամ վերացման»:

Բայց սա միջազգային ավազակութեան եւ մարդկութեան հանդեպ գործած արյունոտ ոճրագործութիւնների անսքող արդարացում է: Մյուս կողմից, այդպիսի մոտեցումով լիովին անտեսվում են ճնշված ժողովուրդների պատմական եւ մարդկային իրավունքները, ճանաչվում են միայն ժողովուրդներ նվաճողների եւ բնաջնջողների իրավունքները:

Ի՞նչ է նշանակում՝ Սովետական Ռուսաստանը Թուրքիային վերադարձրեց Կարսի մարզը, որովհետեւ այն մինչեւ 1878 թվականը «պատկանել էր» Թուրքիային: Հարց է առաջանում. իսկ ի՞նչ էր պատկանում այդ հողի վրա հազարամյակներով ապրած եւ ստեղծագործած ժողովրդին: Ինչո՞ւ երկրի

բնիկ ժողովուրդն իրավունք չունի այդ հողի նկատմամբ: Ինչ^ու չէր կարելի Կարսի եւ հայկական մյուս մարզերը վերադարձնել, հանձնել հայ ժողովրդին, եթե այդքան անհրաժեշտ էր ուղղել ցարիզմի թույլ տված պատմական անարդարությունը: Հավանաբար այն պատճառով, որ Սովետական Ռուսաստանը այդ ժամանակ չէր ուզում փչացնել հարաբերություններն իր «դաշնակից» Թուրքիայի հետ: Այդ ձիշտ է:

Այդպես էլ հարկավոր էր ասել եւ ոչ թե ակնարկել, թե այդ մարզերում թուրքերը սրատել էին հայ ազգաբնակչությանը եւ դրանով իսկ «պատմական» իրավունք նվաճել այդ հողերի վրա: Այլեւս գաղտնիք չէ, թե ինչքան ոսկի, թնդանոթ, գնդացիր, հրացան, փամփուշտ եւ այլ կարգի օգնություն է ստացել Թուրքիան Սովետական Ռուսաստանից, որպեսզի կռվեր միջազգային իմպերիալիզմի եւ համաշխարհային կապիտալի տիրապետության դեմ, գաղութային Արեւելքն ազատագրելու եւ համաշխարհային հեղափոխության հաղթանակի համար: Այդ մասին շատ է գրվել. բավական է կարդալ Ա. Սկաչկոյի «Ժիզն նացիոնալնոստեյ» թերթի (ՌՍՖՍՌ Ազգությունների կոմիսարիատի օրգանը Մոսկվայում) 1921 թ. մարտի 4-ի համարում «Հայաստանը եւ Թուրքիան առաջիկա կոնֆերենցիայում» վերնագրով հոդվածը, Պավլովիչի (Վելտման) գիրքը՝ «Ռեւոլյուցիոննայա Տուրքիա» (Մոսկվա, 1921 թ.), Ս.Մ. Կուզնեցովայի «Ուստանովենիյե սովետսկո-տուրեցկիխ օտնոչենիյ» գրքուկը (Մ., 1961 թ.):

Ստանալով այդ օգնությունը՝ Թուրքիան հարձակվեց հենց նոր անկախ հռչակված Հայաստանի վրա՝ հավաստիացնելով ամենքին, թե իբր հենց անկախ Հայաստանն է «խանգարում» Արեւելքում եւ Արեւմուտքում համաշխարհային հեղափոխության ծավալմանը, թե իբր հենց այդ Հայաստանն է հանդիսանում համաշխարհային իմպերիալիզմի եւ կապիտալի «միջնաբերդը», «հակահեղափոխության հիմնական ուժը», որ ոչնչացնելով Երեւանի հայկական պետությունը՝ «ապահովված կլինի» համաշխարհային իմպերիալիզմի ու կապիտալի նկատմամբ համաշխարհային հեղափոխության հաղթանակը: Եւ սկսվում է գրոհը:

Ջդիմանալով Կարա Բեքիր փաշայի «հեղափոխական» բանակի եւ 11-րդ Կարմիր բանակի վերջնագրերի ճնշմանը՝ միջազգային իմպերիալիզմի «միջնաբերդ» միկրոսկոպիկ Հայաստանը տեղի տվեց, պարտվեց: Մինչդեռ համաշխարհային իմպերիալիզմը մնաց անվաս: Երբեք եւ ոչ մի զինված

ընդհարում տեղի չունեցավ «Հեղափոխական» Թուրքիայի եւ իսկական իմպերիալիստների զինված ուժերի միջեւ:

Սովետական իշխանության շնորհիվ, հայ ժողովրդի բախտից, Հայաստանի մի մասը փրկվեց բնաջնջումից, Հայաստանի 90 տոկոսի ճակատագրից:

Ահա թե ինչ են ներկայացնում իրենցից 1918-1920 թթ. պարագաները, որոնց արդյունքը Բատովսկին համարում է «վերացման չենթարկվող պատմական անհրաժեշտություն»:

Ի՞նչ էր իրենց ներկայացնում 1918 թ. Բրեստի հաշտությունը, որը հիշատակում է Բատովսկին: Դա գերմանա-թուրքական ագրեսորների կողմից Սովետական Ռուսաստանին բռնություններ պարտադրված թալանչիական միակտ էր: Բայց երբեւէ Սովետական Ռուսաստանը համարե՞լ այն իբրեւ «վերացման ո՛չ ենթակա պատմական անհրաժեշտություն»: Ո՛չ, երբե՛ք: Ընդամենը ութ ամիս անց Բրեստի հաշտության պայմանագիրը պատառոտվեց որպես պատմական անհրաժեշտություն, որով եւ ջնջվեց պատմական այդ խայտառակությունը:

Ի՞նչ էր Բաթումի «հաշտության» պայմանագիրը, որը հիշատակվում է Բատովսկու կողմից Հայաստանի եւ Վրաստանի վրա Թուրքիայի «պատմական» իրավունքները հիմնավորելու նկատառումով:

Դա թուրքական ագրեսիայի վիժվածքն էր, որը տակավին չմկրտված՝ թաղվեց չորսամսյա հասակում:

Ի՞նչ բան էր Ալեքսանդրապոլի «հաշտության» (ավելի ճիշտ՝ «մեռած») պայմանագիրը, եթե ոչ թուրքական ագրեսիայի մի վիժվածք, որը լույս աշխարհ եկավ արդեն մեռած եւ չճանաչված նույնիսկ ծնողների կողմից:

Ահա, թե ինչ են ներկայացնում իրենցից «1918-1920 թվականների հանգամանքների» արդյունքները, որոնց Հ. Բատովսկին հանդգնել է օժտել միջազգային իրավունքի գործնական համարելով դրանք «պատմական անհրաժեշտություն» եւ «վերանայման ո՛չ ենթակա» գործոններ: Բայց միջազգային իրավունքի այն ո՞ր լրջմիտ իրավագետ-իրավաբանը կարող է ընդունել այդ «գործոնները» որպես պատմական Հայաստանի տերիտորիայի 90 տոկոսի վրա Թուրքիայի պատմական իրավունքների ապացույց, եթե ոչ բացի թուրքական ագրեսորների այնպիսի փաստաբաններից, ինչպե՛ս իսիք են Միլլերը, Պավլովիչը եւ նման մարդիկ:

Սակայն Միլլերը եւ ընկերները՝ դեռ բոլորը չեն։ Աշխարհում կան ավելի զգաստ մտքեր եւ՝ միջազգային իրավունքի եւ՝ պատմության գիտականեր, կա մարդկություն եւ պատմության տրամաբանություն, այժմեականություն օրենք, որը դատապարտում է ժողովրդասպանության քաղաքականությունը եւ պահանջում հանցագործներից համապատասխան փոխհատուցում, օրենք, որը բացառություն չի ընդունում։

Զարմանալի է, որ 1918-1920 թվականների պարագաների մեջ Հ. Բատովսկին «մոռացել է» հիշատակել այնպիսի մի «մանրուք», ինչպիսին է Սեւրի դաշնագիրը, որի տակ դրված են ոչ միայն Թուրքիայի եւ Հայաստանի, այլեւ աշխարհի բոլոր մեծ տերությունների ստորագրությունները։ Եթե այդքան անհրաժեշտ էր խոսել պատմական անհրաժեշտության մասին, ապա հենց պետք էր հիշատակել Սեւրի դաշնագիրը՝ Հայաստանին վերաբերող մասով, որովհետեւ հենց նա լիովին բխում էր պատմական անհրաժեշտությունից եւ, դրանով իսկ, ենթակա չէր վերացման։ Հավերժացնել 1921 թվականի պայմանագրով գծված սահմանը՝ կնշանակեր ամբողջովին անտեսել հայ ժողովրդի ինքնուրույն, իրավահավասար գոյության իրավունքը եւ այդպիսով արդարացնել ու խրախուսել ժողովրդասպանության քաղաքականությունը, որը, կարծում ենք, չի ցանկանում եւ ինքը՝ Հ. Բատովսկին։ Քանի որ դա այդպես է, ապա նա պետք է ընդունի, որ իր «պարզաբանումները» եւ «ճշտումները» Գեմբարսկու հոգվածի առթիվ անհարկի եւ սխալ են ոչ միայն պատմական եւ գիտական հավաստիության տեսակետից, այլեւ ՄԱԿ-ի կանոնադրության տեսակետից, որի անդամներ են հանդիսանում ՍՍՌՄ-ը եւ Թուրքիան, այլեւ մարդկային բարոյականության առումով։ Արդ՝ Կարսի եւ այլ մարզերի (պատմական Հայաստանի 90 տոկոսը) եւ միլիոնավոր ազգակիցների կորուստը չի կարելի դիտել սոսկ իբրեւ «բարոյական տհաճություն» հայ ժողովրդի համար, ինչպես կարծում է Բատովսկին, այլ՝ մահուլ եւ կենաց հարց, որը ոչ մի կերպ չի կարելի ամփոփել «տհաճություն» հասկացողության շրջանակներում։

Բատովսկին չի զգում, որ այդտեղ նա սահում է փոքր ժողովուրդների ազգային արժանապատվությունը վիրավորելու դիրքերը՝ մոռանալով, որ սոցիալիստական մեծ տերության՝ ՍՍՌՄ-ի պետական արժանապատվությունը գոյանում է սովետական 15 հանրապետությունների, որոնցից մեկը հանդիսանում է Սովետական Հայաստանի Հանրապետությունը, ազգային-

պետական արժանապատվություններից: Ուստի, վերավորելով մեկի արժանապատվությունը, դրանով իսկ վերավորանք է հասցվում ամբողջին:

Հայկական հարցի արդարացի եւ վերջնական լուծումը նույնքան, եթե ոչ ավելի, պատվավոր խնդիր է ժամանակակից պատմություն, ինչպես լեհական, հրեական հարցերի լուծումը, ինչպես Ասիայի, Աֆրիկայի եւ Լատինական Ամերիկայի ժողովուրդներին օտարերկրյա լծից ազատագրելու հարցը;

Ահա ինչ որ ցանկանում ենք ասել Հենրիկ Բատովսկու «պարզաբանումներ» առթիվ:

5-6 մարտի 1962թ. Երեւան

Ն. Վ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

/ պատմական գիտութ. թեկնածու,
Հայկ. ՍՍՌ Գիտ. ակադեմիայի պատմության
ինստիտուտի ավագ գիտ-աշխատակից/

Ռուսերեն բնագրից թարգմանեց հեղինակը՝ ստորագրություն
10/ IX -62 թ.

Հոդվածը լեհերեն թարգմանություն մե տպագրվել է Վարչավայի
«Kieruniki» շաբաթաթերթի 1962 թ. հունիսի 1-ի № 26-ում:

3.

պրոֆ. դ-ր Հենրիկ Բատովսկի
Կրակով
փ. Slawkowska 11 m is tel. 59066
Skrytka 46, Krakow I.

Krakow, dnia.....196...r.
Cracovie, le. 1 juillet
1962

Երեւան, Հայաստան, ՍՍՌՄ.

պարոն
Ն. Վ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ

Հարգելի կոլեգա,

Մեծ հետաքրքրությամբ, բայց եւ մեծ զարմանքով կարդացի Ձեր նամակը՝ տպագրված մեր «Kierunki» շաբաթաթերթի № 26-ում, այսօրվա թվագրությամբ:

Նախ եւ առաջ արտահայտում եմ խոր ափսոսանքս, որ իմ առտնին հոգևածը՝ տպագրված նույն շաբաթաթերթի վերջին՝ հունվարի 14-ի համարում, կարող էր այդքան վատ հասկացվել: Ձեր պատասխանն այդ հոգևածին հանդիսանում է մի թյուրիմացություն, քանի որ ես ոչ մի տեղ չեմ արտահայտել այն կարծիքները, որ Դուք ինձ եք վերագրում:

Թերեւս այդ թյուրիմացությունն արդյունք է վատ թարգմանություն, ես չգիտեմ, եթե ինքներդ կարդայիք նույնը լեհերեն... Թերեւս Դուք ձեռքի տակ ունեք ավելի անհաջող թարգմանություն, կամ թե կարող է պատահել, որ Ձեր պատասխանը ճիշտ չէ թարգմանված լեհերեն: Հնարավոր է, իմ կարծիքով, այսպես մեկնաբանել:

Որպես լեհացի եւ առանձնապես Լվովում ծնված մարդ, երբեմնի մի լեհական քաղաքում, որտեղ դարերի ընթացքում ապրել է հայկական մի բազմամարդ գաղութ, որտեղ գտնվում է մի հայկական տաճար, որը միջնադարյան արվեստի գլուխ-գործոցների շարքին է պատկանում, ես շարունակ կենդանի հետաքրքրություն եմ տածել դեպի ձեր ազնիվ եւ դժբախտ ազգը, որի ճակատագիրը շատ կողմերով նման է լեհերի ճակատագրին:

Հետեւապես ես ոչ մի դեպքում, հասկանալի է, չէի կարող ինձ թույլ

տալ արտահայտելու մի կարծիք, որը հակառակ է իմ բարեկամական զգացմունքներին ձեր ազգի նկատմամբ եւ միաժամանակ հակասեր ճշմարտությանը:

Հունվարի 14-ին հրապարակած իմ հոդվածի միակ նպատակն է եղել ցույց տալ, որ Մոսկվայի կառավարությունը այն ժամանակ գտնվում էր գրեթե անեկանելի վիճակում, երբ նա հարկադրված էր կնքելու 1921 թ. ճակատագրական պայմանագիրը:

Այն օրերի սխտուկիան է, որ ես հիշատակել եմ իմ հոգվածում որպես պատմական անհրաժեշտություն: Իմ հոգվածում ես ոչ մի տեղ չեմ արտահայտել որեւէ միտք, թե Սովետական Ռուսաստանի եւ Թուրքիայի միջեւ կնքված ՝ լինի այդ Բրեստի 1918 թվականի, թե Մոսկվայի 1926 թվականի պայմանագրերը, ինչպես եւ 1918 թ. եւ 1920 թ. Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ կնքված պայմանագրերը եղել են իրավացի: Ես բացառապես հիշատակել եմ դրանք որպես պատմական իրողություններ եւ ուրիշ ոչինչ:

Նույն կերպ են դիտվում մեզ մոտ նաեւ ցարական Ռուսաստանի Պրուսիայի եւ Ավստրիայի հետ կնքված պայմանագրերը Լեհաստանի բաժանման վերաբերյալ: Ձի կարելի ժխտել, որ այս ակտերն ստորագրվել են, քանի որ դրանք պատմության սեփականությունն են: Բայց դրանից չի կարելի նաեւ հետեւցնել, թե բաժանումներ կատարած տերությունները իրավունք ունենին անպայման բաժանել մեր հողերը:

Նմանապես եւ թվարկելով պատմական փաստերը, ես ոչ մի տեղ չեմ ասել, որ Թուրքիան իրավունք ուներ զավթելու հայկական հողերը: Ես մատնանշել եմ միայն, որ այդ հողերը պատկանում էին Թուրքիային, ինչպես մեզ մոտ նշում են, որ Վարչական պատկանում էր ցարական Ռուսաստանին կամ Կրակովը՝ Ավստրիային:

Ձեր նամակում Դուք հարցնում եք, թե ես ինչու չեմ հիշել 1920 թ. օգոստոսի 10-ի Սեւրի պայմանագիրը՝ ստորագրված Լեհաստանի կողմից նույնպես: Պարզապես այն պատճառով, որ ես իմ հոգվածի մեջ խոսում եմ միայն ռուս-թուրքական հարաբերությունների մասին, այնպես որ մի պայմանագիր, որը չէր ստորագրվել Ռուսաստանի կողմից, ոչ մի կապ չունի շարադրած հոդվածի հետ: Դուք չպետք է մոռանաք, որ սովորական հոդվածի հրապարակումը ոչ գիտական հանդեսում թույլ չի տալիս հանգամանորեն թվարկել բազմաթիվ մանրամասնությունները:

Վերջապես, Դուք անտեսել եք այն փաստը, որ իմ հունվարի 14-ի հոգովածի վերջնական եզրակացությունն է, թե Բ. Վ. Գեմբարսկու աշխատանքը ես գտնում եմ «հետաքրքիր եւ ուշադրության արժանի» (*Cikawy i godny uznanta*), որից Դուք կարող եք հետեւցնել, որ ես համաձայն եմ նրա կարծիքին Հայաստանի եւ Թուրքիայի հարաբերությունների վերաբերյալ:

Եթե Դուք մտադրություն ունեք պատասխանել, բարի եղեք կատարել այն կամ ուղևորեն կամ թեկուզ արեւմտյան որեւէ լեզվով: Ես հասկանում եմ ուղևորեն, բայց չգիտեմ այնքան բավարար չափով, որ կարողանամ նամակ գրել:

Ընդունեցեք խորին հարգանացս հավաստիքը:

ՀԵՆՐԻԿ ԲԱՏՈՎՍԿԻ, docteur ès lettres,

պրոֆեսոր Նոր եւ նորագույն
(ժամանակից) պատմության Կրակովի համալսարանում.

(Թարգմանություն ֆրանսերենից- ստորագրություն)
[Ն. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ]

Նշված է Թարգմանություն օրը՝ 10/ VII-62 թ. Երեւան